# MODERN ARMENIAN

*Maximum Marks: 80*

*Time Allowed: Three hours*

*(Candidates are allowed **additional 15 minutes** for only reading the paper.*
*They must **NOT** start writing during this time.)*

*Answer **all** questions.*

*The intended marks for questions or parts of questions are given in brackets [ ].*

**Question 1** **[20]**

**Write a short composition in Armenian in about 400 words on *any one* of the following topics.**

**Գրեք արդի հայերենով կարճ շարադրություն՝ մոտ 400 բառով հետևյալ թեմաներից որևէ մեկով:**

(i) Իմ Հայաստանը

(ii) Պատանեկությունից դեպի երիտասարդություն

(iii) Ընկերներիս հետ

(iv) Իմ ընտանիքը

**Question 2** **[8]**

**Choose the correct option to translate from Armenian to English.**

**Ընտրեք ճիշտ տարբերակը հայերենից անգլերեն թարգմանելու համար:**

(i) **Նա հրավեր էր ստացել ղեկավարությունից միջոցառմանը մասնակցելու համար:**

(a) He received a letter from management to attend the event.

(b) He received an invitation from management to attend the event.

(c) He received an invitation from the principal to attend the event.

(d) He received an invitation from management to attend the concert.

**This Paper consists of 7 printed pages and one blank page.**



Downloaded From www.icseboard.org

(ii) **Այդ քաղաքի հրատարակչության լույս ընծայած բոլոր գրքերը միշտ էլ բարձրորակ են եղել:**

(a) All the magazines published by the publishing house of that city have always been of high quality.

(b) All the books published by Mr. Ahluwalia have always been of high quality.

(c) All the books published by the publishing houses of that country have always been of high quality.

(d) All the books published by the publishing house of that city have always been of high quality.

(iii) **Մի հազվագյուտ հրացան է պահպանվում Արգենտինայի ազգային պատմության թանգարանում:**

(a) The rare rifle is in the National History Museum of Argentine.

(b) That rare tank is preserved in the National History Museum of Argentine.

(c) A rare rifle is preserved in the National History Museum of Argentine.

(d) This rare rifle is preserved in the National Museum of Argentine.

(iv) **Տղան զարմանքով նայեց իր ընկերոջն ու նեղացած հեռացավ:**

(a) The boy looked at his friend in surprise and left upset.

(b) The boy looked at his mother in surprise and left upset.

(c) The boy looked at his friends in surprise and left upset.

(d) The boy looked at his friend in surprise and left.

(v) **Գիտնականն իր խոսքում անդրադարձավ վերջերս լույս տեսած բազմահատոր գրքին:**

(a) The scientist's speech referred to a recently published book.

(b) The scientist referred to a recently published multi-volume book in his speech.

(c) The professor's speech referred to a recently published multi-volume book.

(d) The professor referred to a recently published multi-volume book in his speech.

Downloaded From www.icseboard.org

(vi) **Կատաղի քամին ուժգին շարժում էր հսկա ծառերի ճյուղերը:**

(a) The fierce wind was violently shaking the branch of the giant tree.

(b) The fierce wind was shaking the branches of the giant trees.

(c) The fierce animal was violently shaking the branches of the giant trees.

(d) The fierce wind was violently shaking the branches of the giant trees.

(vii) **Հաղթող թիմի մարզիկները ուրախությունից հուզվել և արտասվում էին:**

(a) The boys of the winning team cried in joy.

(b) The athletes of the winning team were overjoyed.

(c) The athletes cried in pain.

(d) The athletes of the winning team were moved with joy and were crying.

(viii) **Ըմբշամարտիկը, որը հաղթել էր մրցույթը, ցանկանում էր մասնակցել օլիմպիական խաղերին:**

(a) The wrestler who won the competition wanted very much to win in the Olympic Games.

(b) The arm wrestler who won the competition wanted very much to participate in the Olympic Games.

(c) The wrestler who won the competition wanted to participate in the Olympic Games.

(d) The wrestler who won the competition wanted very much to participate in the Commonwealth Games.

**Question 3** **[12]**

**Translate the following passage from Armenian to English.**

**Տրված տեքստը հայերենից թարգմանել անգլերեն:**

Արհեստական սիրտ

Ըստ Եգիպտոսից ստացված տեղեկությունների՝ հնագետները դամբարաններից մեկում գտել են քառասնամյա կնոջ մումիա: Կնոջ մարմինը պահպանվել է հրաշալի վիճակում: Սակայն, որոշ ժամանակ անց, արհեստական սրտի աշխատանքը խափանվել է՝ դառնալով կնոջ մահվան պատճառ:

Downloaded From www.icseboard.org

Առաջին պահին այս լուրը ցնցեց աշխարհը՝ հնագետներին ու պատմաբաններին թողնելով ապշահար վիճակում:
Պարզվում է, որ այս դեպքը միակը չէ: Հնագետները մեկ այլ մումիայի ուսումնասիրություններից հետո գտել են, որ այն ևս ունեցել է արհեստական սիրտ:
Գտածոները ապացուցում են, որ հին եգիպտացիները վիրաբուժության ասպարեզում ևս հասել են աննախադեպ հաջողությունների՝ այսօրվա մարդու համար շատ զարմանալի ու անհնարին թվացող: Փաստորեն հին եգիպտացիները իրենց ժամանակից մի քանի հազար տարով առաջ էին անցել:

**Question 4** **[8]**

**Choose the correct option to translate from English to Armenian.**

**Ընտրեք ճիշտ տարբերակը անգլերենից հայերեն թարգմանելու համար:**

(i) **He asked me if I had invited Ashok to dinner.**

(a) Նա ինձ պատմեց, թե ինչպես է հրավիրել Աշոկին ընթրիքի:

(b) Նա ինձ հարցրեց, թե արդյո՞ք նա հրավիրել է Աշոկին ընթրիքի:

(c) Նա ինձ հարցրեց, թե արդյո՞ք ես հրավիրել եմ Աշոկին ընթրիքի:

(d) Նա ինձ ասաց, որ հրավիրել է Աշոկին ընթրիքի:

(ii) **My father advised me, "Work hard and do not waste time."**

(a) Իմ հայրն ինձ ասաց, «Տքնաջան աշխատիր և ժամանակ մի կորցրու»:

(b) Իմ հայրն ինձ խորհուրդ տվեց, «Հանգիստ աշխատիր և ժամանակ շահիր»:

(c) Իմ հայրն ինձ խորհուրդ տվեց, «Տքնաջան աշխատիր և ժամանակ մի կորցրու»:

(d) Իմ մայրն ինձ խորհուրդ տվեց, «Տքնաջան աշխատիր և ժամանակ մի կորցրու»:



Downloaded From www.icseboard.org

(iii) **He suggested to his wife that they should go shopping.**

(a) Նա իր կնոջն առաջարկել է, որ գնան հարազատներին տեսնելու:

(b) Նա իր կնոջը համոզել է, որ գնան գնումներ կատարելու:

(c) Նա իր ամուսնուն առաջարկել է, որ գնան գնումներ կատարելու:

(d) Նա իր կնոջն առաջարկել է, որ գնան գնումներ կատարելու:

(iv) **He exclaimed that it was a very beautiful picture.**

(a) Նա բացականչեց, որ այն շատ գեղեցիկ նկար էր:

(b) Նա ուրախությամբ բացականչեց, որ այն շատ գեղեցիկ նկար էր:

(c) Նա բացականչեց, որ այն շատ տգեղ նկար է:

(d) Նա բացականչեց, որ այն շատ գեղեցիկ կամուրջ է:

(v) **The doctor advised the patient to take the medicine regularly.**

(a) Բժիշկը խորհուրդ տվեց հիվանդին դեղորայքը չընդունել կանոնավոր:

(b) Բժիշկը խորհուրդ տվեց հիվանդին դեղորայքն ընդունել կանոնավոր:

(c) Բժիշկը խորհուրդ տվեց այցելուներին դեղորայքն ընդունել կանոնավոր:

(d) Բժիշկը խորհուրդ տվեց հիվանդին դեղորայքն ընդունել ամեն օր՝

(vi) **I requested the teacher to explain that question to me.**

(a) Ես խնդրեցի ուսուցչին, որ այդ հարցն ինձ նորից բացատրի:

(b) Ես խնդրեցի մայրիկիս, որ այդ հարցն ինձ բացատրի:

(c) Ես ասացի ուսուցչին, որ այդ հարցն ինձ բացատրի:

(d) Ես խնդրեցի ուսուցչին, որ այդ հարցն ինձ բացատրի:

(vii) **Rani said to the teacher, "Let me go home early."**

(a) Ռանին հարցրեց ուսուցչին, «Թույլ տվեք շուտ գնամ տուն»:

(b) Ռանին ասաց ուսուցչին, «Թույլ մի տվեք շուտ գնամ տուն»:

(c) Ռանին ասաց ուսուցչին, «Թույլ տվեք շուտ գնամ տուն»:

(d) Ռանին ասաց ուսուցչին, «Թույլ տվեք շուտ գնամ դպրոց»:



Downloaded From www.icseboard.org

(viii) **The doctor asked the patient how he was feeling.**

(a) Բժիշկը հիվանդին հարցրեց, թե ինչպես էր նա իրեն զգում:

(b) Բժիշկն աղջկան հարցրեց, թե ինչպես է նա իրեն զգում:

(c) Բժիշկը հիվանդին հարցրեց, թե արդյո՞ք իրեն լավ է զգում:

(d) Հիվանդը բժշկին հարցրեց, թե ինչպես է նա իրեն զգում:

**Question 5** **[12]**

**Translate the following passage from English to Armenian.**

**Տրված տեքստը անգլերենից թարգմանել հայերեն:**

The Desert

A great part of Arabia is a desert. There are springs of water deep below the earth that are natural sources of water. These springs are surrounded by patches of grass that grow into figs and palm trees. This makes it a cool and shady region. Such a place is called an oasis.

The Arabs live in tents in the desert as it makes it easy for them to move from one place to another. They move from one oasis to another in search of water for their animals.

These Arabs have the finest horses in the world.

However, it is the camel that is more useful to the Arabs than the horse. It is much bigger and stronger than the horse. One camel can carry as much load or even more load than two horses. Therefore, it is often called the Ship of the Desert.

**Question 6**

**Read the passage given below carefully and answer the questions that follow in Armenian.**

**Ուշադիր կարդացեք ստորև տրված հատվածը և պատասխանեք հայերենով հաջորդող հարցերին:**

Անի Քաղաքը

999 թվականն էր՝ առաջին հազարամյակի վերջը: Հայաստանի մայրաքաղաք Անին բուռն հուզումների մեջ էր: Լուրեր էին պտտվում թե հազարամյակը լրանալուն պես աշխարհը պիտի **կործանվի**, թե եկել է մարդկության վերջը: Անեցիները ո՛չ շինարարություն էին ուզում սկսել, ո՛չ ամուսնանալ, ո՛չ որևէ լուրջ գործով զբաղվել: «Միևնույնն է, աշխարհի վերջն է, բոլորս պիտի **մեռնենք**», - ասում էին **միմյանց** ու



Downloaded From www.icseboard.org

տարվում միայն հարբեցողությամբ, կերուխումով: **Խուճապը** գնալով մեծանում էր:

Ահա այդ **անօգուտ** իրարանցման մեջ անեցիներին **ոգեշնչեցին** Գագիկ թագավորը, նրա կինը՝ Կատրանիդեն և ճարտարապետ Տրդատը:

Ծուռով քաղաքում նոր լուրեր տարածվեցին: Իբր թե Աստծուն էր հասել հայոց աղոթքը, և իբր թե Տերը երևացել էր Գագիկ թագավորին և ասել.

-Հայտնի՛ր քո ժողովրդին, որ Հայաստանը չի կործանվի, եթե ազգովի զբաղվեն արարչագործությամբ՝ կառուցեն, կանաչապատեն, շենացնեն երկիրը և հիացնեն ինձ:

Եվ Անին սկսեց **շենանալ**: Դրանք մի-մի հրաշալիք էին, որ կառուցում էր **հանճարեղ** ճարտարապետ Տրդատը: Անին տեսած **օտարականները**, վերադառնալով իրենց երկրները, պատմում էին ամենքին, որ հայոց մայրաքաղաքում շատ ավելի հրաշալիքներ կան, քան Եվրոպայի բոլոր քաղաքներում միասին վերցրած:

Զբաղված լինելով աշխարհաշեն գործերով՝ անեցիները մոռացան ահ ու երկյուղ և շարունակեցին ապրել՝ պաշտելով ու ծաղկեցնելով **անզուգական** Անին:

(i) Ի՞նչ լուրեր էին պտտվում աշխարհի կործանման մասին: [5]

(ii) Ո՞րն էր տիրոջ պատգամը: [5]

(iii) Ի՞նչ եղավ հետո Անիի հետ: [5]

(iv) Գրել ընդգծված բառերի հոմանիշները: [5]



Downloaded From www.icseboard.org